

Կարծիք

Ա.01.05 - "Չավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն" մասնագիտությամբ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Տիգրան Գալստյանի "Չատկանիշներ համապատասխանեցնող արտապատկերումների հայտնաբերման խնդրի վիճակագրական և հաշվողական բարդությունը" ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսության արդյունքները վերաբերում են տվյալների հավաքածուների համապատասխանեցմանը տարբեր տվյալների շտեմարաններում: Խնդիրը ունի բազմաթիվ տեսական և գործնական կիրառություններ, որոնք քննարկված են ատենախոսության մեջ: Ատենախոսությունում քննարկվում են ինչպես հատկանիշների համապատասխանեցման խնդրի տարբեր դրվածքներ, այնպես էլ, տարբեր տվյալների համար մշակված ալգորիթմների կիրառությունները:

Ատենախոսությունը բաղկացած է չորս գլխից՝ ներածությունից և երեք հիմնական գլուխներից: Առաջին գլուխը՝ ներածությունը, պարունակում է խնդրի դրվածքի և հիմնական հասկացությունների սահմանումներ, ինչպես նաև այս խնդրին վերաբերող նախկին արդյունքներ: Երկրորդ գլխում Գալստյանը դիտարկում է խնդրի այնպիսի դրվածք, որտեղ համապատասխանեցվող երկու բազմություններից մեկում առկա են առաջադյաններ (ուրիշ բաշխումից եկած տվյալներ, կամ շատ աղմուկ պարունակող տվյալներ) իսկ մյուսում՝ ոչ: Երրորդ գլխում Գալստյանը դիտարկում է խնդրի ավելի ընդհանրացված տարբերակը: Քննարկվում է այն դեպքը, երբ համապատասխանեցվող երկու բազմություններն էլ պարունակում են առաջադյաններ: Վերջին՝ չորրորդ գլխում, Գալստյանը քննարկում է իր կողմից առաջարկված և այլ հայտնի համապատասխանեցման խնդիրների կիրառությունները կենսաբժշկական տվյալների շտեմարանի վրա: Ներկայացված փորձերի արդյունքները ցույց են տալիս առաջարկված մեթոդների արդյունավետությունը իրական տվյալների համար:

Ատենախոսությունում տեղ գտած արդյունքները նոր են, պատկանում են հեղինակին և լավ են շարադրված: Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրված են հեղինակավոր ամսագրերում և ներկայացվել են ոլորտի ամենահայտնի կոնֆերանսներում:

Կարծում եմ, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Տիգրան Գալստյանը, արժանի է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ֆ.մ.գ.թ. Վահան Հուրոյան
Դեկտեմբեր 22, 2023թ

